

Նկ. 90. Արձ. № 161։

Մանրություն.— Արձանագրությունը չափածո է, այսպես՝

Յարութիւն արքեպիսկոպոս
Շինեաց զաղբիւրս այս յորդանոս։
Ով վայելողք այսմ ջրոյս,
Յիշէք զսա առ տէր Յիսուս։

Սա էր առնմէն Տէր-Բարսեղանց
Եւ սահմանէն անտի Տաւուշայ։
Սանահին յաջորդեաց,
Արդեամբ իւրով զայս օրինեաց։

2. Քաջ յիշատակել է միայն Հարություն արքեպիսկոպոսի անունը։

Տարբերությունք.— Հար թվականը գրել է սկզբին 4 տարվա սխալով — 1835։ Լալայանն արտագրելով նրանից, նույն սխալը կրկնել է։

163. Մագիստրոսի ճեմարանի մոտ, երեք խաչքարերից հարավայինի վրա, ուղղագիր գրերով

ՀՓ ԾԵ Մ 1139

Հրատարակված է՝ Քաջ 629, Հար 295, Լալ 386

1 Սբ նշան տրունական տր Սար-
2 գսին լեր քաւարան։ Թվ. ԾԵ։